ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԿԱՎԱՌԱԿ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻՑ

(Նախնական հաղորդում)

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը՝ ղեկավարությամբ պատմական գիտությունների դոկտոր Համլետ Լ. Պետրոսյանի, Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախաձեռնությամբ, «Երկիր» միության ու ԼՂՀ կառավարության ֆինանսավորումով արդեն չորրորդ տարին է, ինչ հետազոտում է Արցախում Հայոց արքա Տիգրան Մեծի (95–55 թթ. մ. թ. ա.) հիմնադրած Տիգրանակերտ քաղաքը:

Արշավախումբը 2005 թ. ճշգրտել է Արցախի Տիգրանակերտի կոնկրետ տեղադրությունը, իսկ 2006–2007 թթ. կարճատև պեղումներ է իրագործել քաղաքի և նրա մերձակայքի տարբեր հատվածներում, որոնց հետևանքով երևան են հանվել քաղաքի Միջնաբերդի «ծիծեռնակապոչ» շարվածքով պարսպի մի հատվածը, Ամրացված թաղամասի հարավային պարսպապատի ժայռափոր հիմքերը, նույն թաղամասի դարավանդներից մեկի հենապատը, Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական բազիլիկայի մնացորդները, Խաչենագետի քարափի մեջ փորված Քարայրային-պաշտամունքային համալիրը, Ժայռափոր ջրանցքը[1]:

2008 թ. մոտ երեք ամիս տևած պեղումները, որոնք ֆինանսավորել է ԼՂՀ կառավարությունը, գերազանցեցին նախկին պեղումների ծավալը մոտ երկու անգամ: Աշխատանքներն ընթացել են Միջնաբերդի, Ամրացված թաղամասի ժայռափոր պարսպահիմքերի, նույն թաղամասի դարավանդներից մեկի հենապա-

---

[1] *Արցախի Տիգրանակերտի հայտնաբերման և հնագիտական հետազոտության առաջին արդյունքների մասին մանրամասն տե՛ս Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Վ. Ս ա ֆ ա ր յ ա ն. Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները.– Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361–365: Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Վ. Ս ա ֆ ա ր յ ա ն. Արցախի Տիգրանակերտի ենթադրվող տարածքի և շրջապատի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները.– Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով (Զեկուցումների ժողովածու), Երևան, 2007, էջ 434–445, Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն, Վ. Ս ա ֆ ա ր յ ա ն, Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Լ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները.– Հին Հայաստանի մշակույթը, թիվ 14, Երևան, 2008, էջ 187–199,* H. P e t r o s y a n. Tigranakert.– Association Internationale des Études Arméniennes Les Dossiers d'Archéologie, № 321, Mai/Juin 2007, p. 80–83, H. P e t r o s y a n. Archaeological Research in Tigranakert.– Association Internationale des Etudes Arméniennes (AIEA) Newsletter, 2007, № 42, p. 31–38.

տի, Կենտրոնական թաղամասի բազիլիկ եկեղեցու, նույն թաղամասի գագաթի, վաղմիջնադարյան դամբարանադաշտի հատվածներում՝ երևան բերելով մ. թ. ա. առաջին դարից մ. թ. XIV դ. գոյատևած մեծ և հարուստ քաղաքի տնտեսամշակութային կյանքի ուշագրավ մանրամասները: Պեղումների արդյունքում բացվել է Տիգրանակերտի «ծիծեռնակապոչ» ամրացումներով պարսպի հյուսիսային պատի մոտ 60 մետրանոց հատվածը, 9 մ տրամագծով շրջանաձև աշտարակը, հարավային պարսպահիմքերի ավելի քան 360 մետրանոց հատվածը, V–VI դդ. քրիստոնեական բազիլիկայի հիմնական մասը:

Պեղածո նյութերի մեջ առանձնակի նշանակություն ունի 2008 թ. հուլիսի 19-ին վաղքրիստոնեական բազիլիկայի պեղումների ժամանակ Աղավնի Ժամկոչյանի հայտնաբերած խեցեղեն փոքրիկ սկավառակը (տրամագիծը՝ 7,5–7,8 սմ, հաստությունը՝ 0,5–1 սմ): Դրա մի երեսին փորագրված է շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ, մյուս երեսին՝ մորթե գլխարկ կրող, բեղ-մորուքով տղամարդու դիմապատկեր: Սկավառակի վրա փորագրված հայերեն արձանագրություններն արդեն իսկ մի վառ վկայություն են եկեղեցու, քաղաքի և ավելի ընդարձակ՝ Խաչենագետի ներքնահովտի վաղմիջնադարյան հայկական ինքնության: Այս գյուտի երկրորդ կարևորությունը զուտ հնագիտական–մշակութային է և կապվում է գտածոյի եզակիության ու նրա գործառույթի հետ[2]:

Սկավառակը գտնվել է եկեղեցու սալահատակի մակարդակից՝ հյուսիսային առաջին մուտքից մոտ երկու մետր դեպի արևմուտք, հյուսիսային պատի տակ՝ երկու մասի բաժանված: Ջարդվածքը հին է, ինչը ենթադրել է տալիս, որ այն սալահատակի վրա է ընկել որոշակի բարձրությունից: Արդյունքում բաժանվել է երկու մասի և կորցրել մի փոքրիկ բեկոր: Հավանական է, որ այն ի սկզբանե դրված է եղել պատի մեջ, գուցե հատուկ խոռոչում կամ պատրհանում (քանի որ սրբատաշ, իրար քիպ հպած սալերով շարված պատերում ճեղքվածքների առկայությունը բացառվում է): Ի վերջո, այն ընկել է հրդեհի մեջ, որի հետևանքով տեղ-տեղ մրոտվել է: Սկավառակը պատրաստվել է լավ մաղված, խառնուրդներ չպարունակող բարձրորակ սպիտակավուն կավից (կաոլինից) և թրծումից հետո ստացել է սպիտակադեղնավուն երանգ: Դեռ թաց վիճակում նրա մի եզրի վրա շաղափել են երկու միջանցիկ անցք (պահպանվել է միայն մեկը, երկրորդը, հավանաբար, գտնվել է կորսված բեկորի վրա), որոնք կապվում են նրա գործառույթի հետ: Ապա սկավառակը հղկվել է, պատվել նույն կավից պատրաստված անգոբով, փայլեցվել: Եզրերը հարթեցվել են դանականման սուր գործիքի օգնությամբ: Փորագրություններն արվել են թաց կավի վրա, հավանական է, մետաղե գրիչների օգնությամբ: Ընդ որում, դատելով փորագիր առանձին բաղադրիչներից, օգտագործվել են երկու տարբեր գործիքներ: Դրանցից մեկն ունեցել է կտրող սայր, իսկ մյուսը՝ բարակ կլորացող ծայր: Սայրի օգնությամբ ստացվել է

---

[2] *Լրատվամիջոցների համար արված նախնական հաղորդագրության մեջ հավանական ենք համարել, որ սկավառակը «պատկանում է այսպես կոչվող նվիրատվական խաչերի թվին. նման իրեր պատվիրում կամ կերտում էին իրենք հավատացյալները և նվիրում եկեղեցուն»: Հիմա, ինչպես կփորձենք հիմնավորել ստորև, հակված ենք հրաժարվել այդ նախնական ենթադրությունից:*

խաչային հորինվածքը (որն իրականացված է կտրվածքում եռանկյուն տարաչափ ակոսներով), կլորացող ծայրով փորագրվել են դիմապատկերն ու գրությունները: Փորագրությունից հետո սկավառակը թրծվել է, ինչի արդյունքում այն դեֆորմացվել է՝ դիմապատկեր կրող երեսը ստացել է ուռուցիկություն, խաչազարդ երեսը, ընդհակառակը, դարձել է գոգավոր:

Սկավառակի ուռուցիկ երեսի վրա (նկ. 1, գծ. 1ա)[3] *փորագրված է տղամարդու կիսապատկեր՝ աջ ուսը, ձգված վիզը, ուղղանայվածք (*in face*) երկարավուն դեմքը: Գլուխն ու ճակատը փակում է կարճ աղեղներից կազմված հորիզոնական ալիքներով հարդարված (ենթադրում ենք մորթե) գլխարկը: Աչքերը ձվածիր են, քիթը՝ կարճ ու կանոնավոր, բեղերը՝ միջին երկարության, մորուքը՝ կարճ: Փորագրությունը սխեմատիկ է, և դժվար է դրա տակ ակնհայտ անհատական գծեր տեսնել: Այլ բան է, որ գլխարկը, բեղերն ու մորուքը կարող են որոշակի կարգավիճակ ցուցել:*

Նկ. 1

Հակառակ՝ գոգավոր երեսին (նկ. 2, գծ. 1բ), փորագրված է խաչը շրջանի մեջ դասական հորինվածքը, որը վաղքրիստոնեական պատկերագրության ամենատարածված թեմաներից է: Հայկական հուշարձաններում այն մեծ տարածում ունի հատկապես V–VI դդ.[4]*: Նման հորինվածքներով քարե սկավառակների մասեր են գտնվել հենց Տիգրանակերտի բազիլիկայի պեղումներից, դրանք քանդակված են նաև քաղաքի մերձակայքում՝ Խաչենագետի ափին գտնվող ժայռափոր համալիրում:*

---

[3] *Լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի, գծանկարը՝ Լ. Կիրակոսյանի:*

[4] *Մանրամասն տե՛ս Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 31-37:*

Մի երեսին դիմապատկեր (որպես կանոն՝ կիսադեմ), մյուսին դավանանքի խորհրդանշան տեղադրելը շատ տարածված երևույթ էր անտիկ, բյուզանդական, սասանյան և հետագա դրամական բազմաթիվ այլ համակարգերում: Ուստի, մեծ հավանականությամբ կարող ենք ենթադրել, որ սկավառակը որպես ընդհանրական նախօրինակ կարող էր ունենալ որևէ դրամ: Իսկ եթե նկատի ենք ունենում դիմապատկերի ակնհայտ սասանյան ոճը, ապա նույնիսկ կարելի է հավանական համարել, որ այն ազդված է հենց սասանյան դրամների պատկերագրությունից (անշուշտ, բացառյալ խաչի կոնկրետ պատկերագրությունն ու հայերեն գրությունները):

Սկավառակը երկու կողմերի վրա էլ ունի հայերեն արձանագրություններ: Ցավոք, այդ գրությունները շատ համառոտ են, ուրեմն՝ տառերի քանակն էլ սահմանափակ (հինգ Ա, մեկ Ե, մեկ Ծ, չորս Յ, մեկ Ն, մեկ Հ, մեկ Ռ, մեկ Վ, մեկ Տ): Այսուհանդերձ, տառատեսակների մասին ընդհանուր պատկերացում կազմել կարելի է: Գրությունները փորագրված են բոլորաձև (կամ բոլորգիծ) երկաթագրով[5]: Տառերը համաչափ չեն, ոչ միշտ է պահպանված դասական



Գծ.1

համամասնությունը: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դրանք փորագրվել են առանց տողերի նախնական ուրվագծման (երևի սկավառակը լրացուցիչ դեֆորմացիայի չենթարկելու նպատակով), թաց կավի վրա, որի դեպքում նման շեղումներից տեխնիկապես պիտի որ դժվար լիներ խուսափել: Վաղ բոլորգիծ արձանագիր երկաթագիրը բավարար չափով ուսումնասիրված է, երևան են հանված նրա բնութագրական գծերը: Թվենք առավել էական մի քանի կողմերը, որոնք դիտելի են և քննության ենթակա արձանագրություններում. տառերն ավելի լայն են, քան ձգված, բոլոր գծերն ունեն նույն հաստությունը (բացառությամբ

[5] *Իրենց ուրվագծով և փորվածքի բարակությամբ առանձնանում են ուռուցիկ երեսի արձանագրության վերջին երկու տառերը, որոնք կազմում են «ԱՅ»(Ա՝ ՍՏՈՒԾՈ՝Յ) հապավումը և երևի հավելվել են հետագայում: Ընդորում գրիչը հակառակ է փորագրել Ա-ի մազագիծը:*

Ա-ի մազագծի), ուղղաձիգ ստեղների միացումները կամարաձև են, տառերի պոչերը, թևերը, գլուխները չեն ենթարկվում վայրահակության օրենքին[6]: Առանձին տառերի առումով, եթե նորից նկատի ունենանք մեր սկավառակը, նշելի է Ա-ի ուղղաձիգ աջ ստեղնի մի փոքր բարձրությունը ձախ ստեղնի համեմատ, Ն-ի վերին հորիզոնական ստեղնի ուղղագծությունը, Վ-ի ձախ ստեղնի համարյա հավասարությունը աջին, Ռ-ի հորիզոնական ստեղնի կամարաձևությունը, Տ-ի ստորին ուղղաձիգ ստեղնի թույլ արտահայտված լինելը, հատկանիշներ, որոնք բավականաչափ դիտելի են V–VII դդ. մի շարք արձանագրություններում (Տեկոր, Երուսաղեմ, Արուճ, Մաստարա, Մրեն, Զկարթնոց): Մեր արձանագրության հնությանը չեն հակասում նաև պատվագրերը, որոնց առաջին օրինակները հայտնի են ամենաուշն արդեն VI դարից (օրինակ՝ Երուսաղեմի մոզաիկաներում):

Հայերեն տառերի որոշ նմուշներ են պահպանվել Տիգրանակերտի անմիջական հարևանությամբ՝ Վանքասարի գագաթին VII դ. կառուցված փոքր կենտրոնագմբեթ եկեղեցու քարերին փորագրված վարպետների նշանների շարքում (Գ, Զ, Թ, Ճ, Մ, Ո)[7], սակայն դրանք անխտիր իրականացված են ուղղագիծ երկաթագրով: Նշելի են նաև Խաչենագետի ափին գտնվող ժայռափոր համալիրի հայերեն գրությունները՝ այս անգամ փորագրված բոլորգրով[8]: Ցավոք, մեր արձանագրությունների գրատեսակների հետ համեմատելի չէ և Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Գյավուրկալայի հայտնի արձանագրությունը[9], որը թեև իրականացված է բոլորաձև երկաթագրով, սակայն խիստ ձգված տառաձևերն ու կապգրությունների առատությունը ցուցում են լիովին այլ ոճ ու ժամանակ: Այս թվարկումներից կարելի է նաև եզրակացնել, որ Խաչենագետի ներքնահովիտը բավականին հարուստ է հայերեն վաղ արձանագրություններով:

Սկավառակի խաչազարդ երեսին՝ խաչի վերին ուղղաձիգ և ձախ հորիզոնական թևերի միջև փորագրված է «ԱՅ «՝ Աստուծոյ բառի հապավումը[10]:

---

[6] *Այս բնութագրերի ավելի ընդարձակ ներկայացումները տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 601-617, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 144-149: Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 60-70:*

[7] З. И. Я м п о л ь с к и й. Памятники Кавказской Албании на горе Бешидаг.– Советская археология, 1960, ¹ 2, с. 249, рис. 5.

[8] *Նյութերը հրատարակված չեն:*

[9] *Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 136: Արձանագրությունը VIII–IX դդ. վերաբերող ընդարձակ տապանագիր է և գտնվել է անցած դարի 50-ական թվականներին:*

[10] *Նույն երեսին՝ խաչի հորիզոնական երկու թևերի վրա առկա են նաև հազիվ նկատելի տառերի հետքեր (խիստ անորոշության պատճառով դրանք գծանկարում չեն արտացոլվել), որոնք, ամենայն հավանականությամբ, փորագրվել են հետագայում: Դրանք հիմնականում բոլորգիր (փոքրատառ) տառեր են և փորագրված են բոլորգիծ երկաթագրով գրված «ԱՅ « բառին հակադիր դիրքով (թերևս, որ չընկալվեն որպես նրա շարունակությունը): Որոշ վերապահությամբ կարելի է տարբերել ե, է, հ, մ (կամ տ), ն տառերը: Դրանց մանրամասն քննությունը թողնում ենք հետագային:*

Հիմնական արձանագրությունը փորագրված է դիմապատկերով երեսին: Տողերը դեմքի երկու կողմերում, ցավոք, համաչափ չեն դասավորված, ավելին, ձախ կողմում փորագրված է երեք, իսկ աջում՝ միայն երկու տող: Վերին ձախ անկյունը, ուր սպասելի էր տեսնել արձանագրության սկիզբը, փորագրված չէ: Ձախ առաջին տողը (որն աջ մասում ընդհանրապես շարունակություն չունի) շատ ավելի ցածր դիրքում է, քան աջ առաջին տողը: Արդյունքում դժվար է միանշանակ որոշել տողերի ընթերցման հերթականությունը, ի մասնավորի խնդրահարույց է, թե որտեղից սկսել ընթերցումը՝ առաջին ձախ, թե՞ աջ տողից: Արձանագրությունը փորագրելուց հետո, երբ դեռ կավը փափուկ վիճակում էր, տաշվել-քերվել է սկավառակի վերին աջ եզրի մի հատվածը, որի հետևանքով վնասվել է արձանագրության առաջին աջ տողի սկզբնամասը և, հավանաբար, ջնջվել է երկրորդ տողի աջ կեսը: Կարող ենք ենթադրել, որ գրիչն այնքան էլ մեծ փորձառություն չի ունեցել նման անսովոր նյութի վրա փորագրություններ կատարելու ասպարեզում: Եթե առաջին երկու տողերի տառերը (թե՛ ձախ և թե՛ աջ կողմերում) փորագրված են ակոսով, ապա երրորդ տողի տառերն արված են մազաքծով և հետագայում հավելածի տպավորություն են թողնում:

Նկ. 2

Վերին աջ առաջին տողում պահպանվել են երկու տառեր՝ «Ե» և հավանական է՝ «Ա»: Սկսելով արձանագրության ընթերցումն այստեղից (որը համարում ենք ավելի հավանական)՝ կունենանք «ԵՍ/ ՎԱՉ .../ ԾԱՌԱՅ ՏՆ / ա՝յ« *նախադասությունը: «ՎԱՉ»-ը փորագրված է դեմքից ձախ: Սկավառակի մակերեսը դեմքից աջ հատվածում, ուր ենթադրելի է անվան շարունակությունը, փոքրիկ ջարդվածք ունի. հնարավոր է, որ այստեղ տեղավորվեր ևս մեկ տառ (դիտե-*

լի է ուղղաձիգ ստեղնի մի հատվածը): Նույն հատվածում, շարունակության վրա սկավառակի մակերեսը, ինչպես նշել ենք, տաշված կամ քերված է: Եթե այն արվել է մինչև թրծումը, ապա անձնանունը պիտի սահմանափակվեր չորս տառով: Այս դեպքում ավելի քան հավանական է, որ ուղղաձիգ ստեղնը պատկանում է «Է» տառին, և մենք ունենք «ՎԱՉԷ» անձնանունը: Պակաս հավանական է, սակայն չի բացառվում, որ սկավառակի նշյալ հատվածը քերվել է թրծումից հետո, այսինքն ջնջվել է նաև արձանագրության մի հատվածը, որը կարող էր պարունակել չորս տառ: Այս դեպքում կարելի է վերականգնել «ՎԱՉԱԳԱՆ» անձնանունը: Այսպիսով, արձանագրությունը կարելի է կարդալ երկու տարբերակներով: Առաջին դեպքում կունենանք «ԵՍ/ ՎԱՉ⌈Է⌉/ ԾԱՌԱՅ Տ⌈ԵԱՌ⌉Ն/ Ա⌈ՍՏՈՒԾՈ⌉Յ», երկրորդ դեպքում՝ «ԵՍ/ ՎԱՉ⌈ԱԳԱՆ⌉/ ԾԱՌԱՅ Տ⌈ԵԱՌ⌉Ն/ Ա⌈ՍՏՈՒԾՈ⌉Յ»: Եթե նկատի ունենանք, որ վերջին՝ «Ա⌈ՍՏՈՒԾՈ⌉Յ»[11] բառը, ամենայն հավանականությամբ, հետագայի հավելում է, ապա արձանագրությունն ունեցել է «ԵՍ/ ՎԱՉ⌈Է⌉/ ԾԱՌԱՅ Տ⌈ԵԱՌ⌉Ն» կամ «ԵՍ/ ՎԱՉ⌈ԱԳԱՆ⌉/ ԾԱՌԱՅ Տ⌈ԵԱՌ⌉Ն» նախնական տեսքը[12]:

Այժմ մի քանի խոսք սկավառակի հնարավոր կիրառության մասին: Սկզբում, երբ չէինք նկատել սկավառակի ստորոտում (սկավառակի ներքնամասը նրա այն դիրքում, երբ դիմապատկերն ուղղաձիգ է, իսկ արձանագրություններն ունեն հորիզոնական ընթեռնելի դիրք) արված միջանցիկ անցքը, հնարավոր էինք համարում, որ այն հավատացյալների կողմից եկեղեցուն մատուցված մի ընծա է՝ հիշատակային գրություններով: Մի երևույթ, որ լայնորեն տարածված էր վաղ քրիստոնեության ժամանակ: Սակայն նախօրոք արված կանոնավոր անցքն ավելի հավանական է դարձնում մի այլ ենթադրություն. սկավառակն այդ անցքով (գուցեն երկու անցքերով, որոնցից միայն մեկն է պահպանվել) անցկացրած թելի միջոցով կապվել է մի ինչ-որ իրի (օրինակ՝ փաթույթի, տուփի և այլն), այսինքն՝ այն կնքադրոշմի դեր է կատարել[13]: Սկավառակն այդ անցքով չէր կարող կախվել որևէ ելուստից և ոչ էլ կարող էր կախվել վզից, քանի որ այդ դեպքում թե՛ դիմապատկերը և թե՛ արձանագրությունները դիտողի համար գլխիվայր դիրքում կհայտնվեին: Թվում է՝ այս ենթադրության հետ լիովին համահունչ է և սկավառակի՝ կավից պատրաստած ու թրծած լինելու հանգամանքը:

Նորից անդրադառնալով արձանագրության Վաչէ կամ Վաչագան անձնանվանը, նկատենք, որ երկու անձնանուններն էլ բավականին հայտնի են Կաղանկատվացու պատմությունից և մասամբ էլ վաղմիջնադարյան հայկական այլ

---

[11] *Աչքի է ընկնում և «Ա»-ի անսովոր գծագրությունը (տե՛ս գծ. 1ա). թվում է՝ գրիչը շփոթել է և հակառակ փորագրել «Ա»-ի մագագծային ստեղնը: Այն, որ նման «մոբիլ» իրերի արձանագրությունները կարող էին ունենալ հետագա հավելումներ, լավագույնս վկայում է Քարվաճառից ծագող 915 թ. մի խաչասալ, որի արձանագրությունը փորագրվել է երեք տարբեր ժամանակներում՝ պահելով առաջինի տրամաբանական ընթացքը (մանրամասն տե՛ս Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչքար…, էջ 104-105, նկ. 115):*

[12] *Շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետներ Գ. Սարգսյանին և Հ. Մելքոնյանին՝ արձանագրության ընթերցման վերաբերյալ խորհուրդների ու դիտողությունների համար:*

[13] *Ասում ենք «դեր է կատարել», քանի որ իսկական կնքադրոշմը ոչ թե փորագրվում, այլ կնքվում էր՝ թաց կավի վրա կնիքը սեղմելու միջոցով:*

աղբյուրներից: Հայտնի են առնվազն երկու Վաչէ և չորս Վաչագան: Վաչագան Քաջ Արշակունին ու նրան հաջորդած Վաչէ առաջինը շատ ավելի առասպելական, քան իրական անձնավորություններ են[14]: Որևէ տեղեկություն, բացի անունից, հայտնի չէ նաև Վաչագան Երկրորդի մասին (նա Կաղանկատվացու մոտ հիշվում է Յաւչագան անունով)[15]: Առավել հանրահայտ են ենթադրաբար V դ. վաթսունական թվականներին գործած Քաջն Վաչէ և V դ. վերջերին ու VI դ. սկզբներին թագավորած Վաչագան Բարեպաշտ արքաները, որոնցից երկրորդն առաջինի եղբորորդին էր: Նրանց մասին Կաղանկատվացու մոտ տեղ գտած ընդարձակ պատմություններն[16] ունեցել են տարաբնույթ մեկնություններ, ընդհուպ մինչև նրանց պատմական անձ լինելու վերաբերյալ կասկածները[17]: Մեր դեպքում ուշագրավ է, որ պատմիչը երկուսին էլ ներկայացնում է ավելի շատ որպես ողորմած քրիստոնյաներ, քան աշխարհիկ տիրակալներ: Չորրորդ Վաչագանը, որի մասին միայն մի հիշատակություն է պահպանվել, գործել է VIII դարում: Պատմիչը նրան հիշում է արաբների՝ դեպի Խազիրք 714 թ. կատարած արշավանքի կապակցությամբ, որպես «զԵռանշահիկն զՎաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան զքաջ կորովի աջողակ աղեղնաւորն»[18]:

Գտածոյի հայտնաբերման հնագիտական միջավայրը (այն գտնվել է V–VI դդ. կառուցված եկեղեցու սալահատակի վրա, սրահի միջնամասում, հյուսիսային պատին կից), խաչի պատկերագրությունը և արձանագրությունների տառաձևերը հիմք են տալիս սկավառակը թվագրել ամենավաղը V դ. վերջերով և ամենաուշը՝ VII դարասկզբով:

Ըստ Կաղանկատվացու Պատմության մեջ տեղ գտած լեգենդային զրույցների՝ եթե Վաչէ երկրորդը հրաժարվել է թագավորությունից, ավետարան վերցրել և վանք մտել, ապա Վաչագան Բարեպաշտը զբաղվել է սրբերի մասունքները հավաքելով ու եկեղեցական ժողովներ գումարելով, որոնցից ամենահայտնին Աղվենի հռչակավոր ժողովն էր: Այսինքն՝ Վաչագան Բարեպաշտի կյանքում բազմաթիվ են եղել իրավիճակները, երբ արքայական «դրոշմակնիքով» կարող էին վավերացվել եկեղեցական փաստաթղթեր կամ մասնատուփեր[19]: Եվ հենց նման դեպքերում էր, որ արքան կարող էր հանդես գալ ոչ թե աշխարհիկ, այլ եկեղեցական «տիտղոսաշարքով»: Սակայն այս մի եզակի գյուտի և նրա մի քանի ենթադրելի հատկանիշների հիմամբ ավելի հեռուն գնացող ենթադրություններ անել չենք կարող: Հուսանք, որ այս հաղորդագրությամբ միայն բացում ենք թե-

---

[14] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի), Երևան, 1983, էջ 40, 41 և հջրդ.:*

[15] *Նույն տեղում, էջ 41, հմմտ. նաև այս մասին Ն. Ադոնցի դիտողությունը. Ն. Ա դ ո ն ց. Քննություն Մովսես Կաղանկատվացու, Էջմիածին, 2002, էջ 73, ծնթ. 2, տե՛ս նաև Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 147:*

[16] *Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 15-17, 46-95:*

[17] *Մանրամասն տե՛ս* А. А к о п я н. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 179–188.

[18] *Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 320:*

[19] *Հմմտ. մասնավորապես Կաղանկատվացու այն հաղորդումները, ըստ որոնց արքան իր մատանիով կնքում է նորագյուտ նշխարները և Աղվենի ժողովի կանոնները. տե՛ս Կ ա - ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 81, 82-83,86, 94:*

ման: Եվ հետագա գյուտերն ու քննությունները հնարավորություն կընձեռեն ավելի հստակեցնել թե՛ հարցադրումները, թե՛ հնարավոր ենթադրությունները:

Տիգրանակերտի այս գտածոն, փաստորեն, Արցախի տարածքում հայտնաբերված ամենահին հայերեն արձանագրություններից մեկն է և լավագույն փաստարկն է Խաչենագետի ներքնահովտի վաղքրիստոնեական հայկական դիմագծի, որը պատմական մի շարք այլ սկզբնաղբյուրների տվյալներով ուրվագծվում էր և մինչև այս գյուտը:

Ինչպես ապացուցված է պատմագիտական մանրամասն քննությամբ, Մեծ Հայքի արևելյան երկու խոշոր նահանգները՝ Ուտիքը, ապա և Արցախը՝ 428–451 թթ. ընթացքում Սասանյան Պարսկաստանի կողմից անջատվեցին Հայաստանից ու միացվեցին Կուրի ձախափնյակը, Մեծ Կովկասի հարավային լեռնափեշերն զբաղեցնող ու Աղվանից անունը կրող թագավորությանը (ապա՝ մարզպանությանն) և եկեղեցուն[20]: Ձախափնյակի համեմատ շատ ավելի զարգացած հայաբնակ Արցախն ու Ուտիքը V–VI դդ. ընթացքում դարձան նոր կազմավորման ադմինիստրատիվ-քաղաքական և հոգևոր-մշակութային հիմնական դերակատարը ու այդ իսկ պատճառով սկսեցին Կուրի ձախափնյակի հետ կիսել և կազմավորման Աղվանից անունը: VII դ. վերջերից ի վեր՝ բուն Աղվանքի տարածքում արաբ նվաճողների ճնշման տակ սկսեց մարել քրիստոնեությունը, Կուրի աջափնյակի հայ բնակչությունը՝ ընդհուպ մինչև XIX դարը, փաստորեն դարձավ Աղվանից եկեղեցու անվան ու քրիստոնեական ավանդույթների համարյա միակ կրողը: Անցած դարի 60-ական թվականներից ի վեր, երբ Ադրբեջանը ձեռնարկեց ԱդրՍՍՀ տարածքում և ՀՍՍՀ հարակից շրջաններում գտնվող հայկական մշակութային ժառանգության բռնայուրացումը, «Աղվանից» անվանումը դարձավ արցախահայության էթնիկական կերպարի և մշակույթի հայկականության մերժման հիմնական խաղաքարը: Եթե Արցախն ու Ուտիքը ներառող եկեղեցին կոչվում է աղվանական (և երբեմն Աղվանք կամ Առան էր կոչվում նաև Կուրի աջափնյակը), ուրեմն, ըստ ադրբեջանցի հետազոտողների, աղվաններ են նաև նրա հետնորդներն ու նրանց ստեղծած մշակույթը:

---

[20] *Նախնական իրավիճակի և նրա փոփոխության պատմաաշխարհագրական հստակ բնութագիրը տրված է VII դ. Աշխարհացույցում. «Աշխարհն Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև [ի Կասպից ծովն] եւ ցՀայոց սահմանն, առ Կուր գետով, թէպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն» (Ս. Տ. Ե ր է մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 105): Խնդրի մանրամասն քննությունը համապատասխան սկզբնաղբյուրների հղումով տե՛ս Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջ.– Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1975, թիվ 2, էջ 149-164, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ.– ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77-95,* К. В. Т р е в е р. Очерки по истории и культуре Кавказской Албании, М.–Л., 1959, с. 200–201; А. А. А к о п я н. Албания–Алуанк..., с. 109–142; А. П. Н о в о с е л ь ц е в. К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период.– К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении. Ереван, 1991, с. 7–15; Б. А. А р у т ю н я н. Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении в 387–451 гг. Там же, с. 16–36.

Ինչպես տեսնում ենք, փաստերն այլ բան են ասում: Աղվանք կոչվող Ուտիքն ու Արցախը շարունակում էին մնալ որպես հայության, հայ մշակույթի, հայերենի և հայ գրչության էական օջախներից մեկը:

Տիգրանակերտում վաղ քրիստոնեական բազիլիկայի հայտնաբերման սկզբից ի վեր արշավախմբի կողմից արվող հավաստումներն այն մասին, որ հայերեն արձանագրությունների գյուտն ավելի քան սպասելի է, ամենևին էլ զուտ ցանկության արտահայտություն չէին: Ինչպես տեսանք, VIII–IX դդ. հայերեն ընդարձակ տապանագիր է գտնվել Գյավուրկալայում: Վանքասարի VII դարի կենտրոնագմբեթ եկեղեցու վարպետների նշանների մի մասը հայերեն տառեր են: Նույն եկեղեցու վրա առկա են նվիրատվական երկու արձանագրություններ (նախնական տվյալներով XI և XIII դդ.), ցավոք, խիստ վնասված. դրանց վերծանությունն արդեն ավարտին է մոտենում և շուտով կհրատարակվեն: Հայերեն նոր արձանագրություններ են հայտնաբերվել Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր համալիրում, որոնք նույնպես վերծանության ընթացքի մեջ են: Վերջապես նշենք 2008 թ. տարվա պեղումներով Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասի հետախուզական խրամատի պեղումների ժամանակ՝ VII–IX դդ. շերտում Տ. Վարդանեսովայի կողմից գտնված կավե կարմրաներկ անոթների երեք բռնակները՝ թրծումից հետո փորագրված հայերեն մեկական տառերով, որոնցից Տ-ն համարյա նույնական է սկավառակի արձանագրության Տ տառի հետ:

Կարող ենք հավաստել, որ Խաչենագետի ներքնահովտի հայկական էթնալեզվական դիմագիծը ցուցող փաստերն ավելի քան խոսուն են: Հուսով ենք, որ Տիգրանակերտի բազիլիկայի հետագա պեղումները նորանոր նյութեր կհավելեն արդեն եղածին:

ДИСК С АРМЯНСКИМИ НАДПИСЯМИ ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА
(Предварительное сообщение)

ГАМЛЕТ ПЕТРОСЯН, АГАВНИ ЖАМКОЧЯН

Р е з ю м е

Арцахская экспедиция Института археологии и этнографии НАН РА уже четвертый год исследует арцахский Тигранакерт, основанный в I в. до н. э. царем Армении Тиграном Великим (95–55 гг. до н. э.). При раскопках раннехристианской базилики (V–VI вв.) центрального квартала в 2008 г. был обнаружен маленький керамический диск (диаметр – 7.5–7.8 см, толщина – 0.5–1.0 см), на одной поверхности которого выгравирован вписанный в круг равноконечный крест, а на другой – лицо бородатого мужчины в меховой шапке. Диск имел пару сквозных отверстий, при помощи которых он был прикреплен к свертку или шкатулке и служил своего рода “клеймом”. На диске выгра

вированы армянские надписи, основная из которых гласит: *“Я/ ВАЧ[Э]/ (или ВАЧ[АГАН]) СЛУГА БО[ЖИ]Й”*. Обстоятельства находки, анализ иконографии и форм армянских букв позволяют датировать диск V–VII вв. Личные имена Вачэ и Вачаган в указанное время носили несколько персон. Среди них особенно выделяется Вачаган Благочестивый, который царствовал в конце V – начале VI в. и, согласно повествованию о нем, созвал церковный собор в Агвене и уделил много времени сбору мощей святых: обстоятельства, которые могут быть созвучны с функцией диска и темой надписи на нем. Высеченные на диске надписи являются ярким свидетельством армянской идентичности как церкви и города, так и всего низовья реки Хаченагет в раннем средневековье.

A DISK WITH ARMENIAN INSCRIPTIONS FROM TIGRANAKERT OF ARTSAKH
(Preliminary information)

HAMLET PETROSSYAN, AGHAVNI ZHAMKOCHYAN

S u m m a r y

The Artsakh expedition of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA has already been for four years excavating the city of Tigranakert, founded in the 1st century B. C. by the Armenian king Tigran the Great (95–55 B. C.). During the excavation in the Central area of the city an early medieval basilica church (the 5th–6th cc. A. D.) was revealed. In 2008 inside the territory of the church a small ceramic disk (diameter – 7.5 - 7.8, thickness – 0.5 -1.0) was discovered. A circle and an equal winged cross on one side of the disk were engraved. On the reverse side a portrait of a man wearing a fur hat, with a beard and moustache was carved. The disk had two holes by means of which it was attached to a box or a scroll. So probably it was supposed to serve as a sealing. There are some Armenian inscriptions on the disk, the main of which is “I/ VACH[E]/ (or VACH[AGAN]) SERVANT OF L[OR]D”. The location, the study of iconography and the Armenian letters confirm the dating of the disk to the 6th–7th cc. A. D. Several persons at that time bore the names Vache and Vatchagan. In that context, of particular significance was the king Vatchagan the Pious. He reigned at the end of the 5th and the beginning of 6th centuries. The legend assures that he called a church council of Aghven. Meanwhile the saints' relics were gathered by him. These arguments could confirm the inscriptions' exact date the 5th – the 6th cc. and the importance of its usage. The Armenian inscriptions carved on the disk are the witness of the Armenian identity of the church itself, the city and all the lower reaches of Khachenaget river in early medieval period.